# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| ՖԱԿՈՒԼՏԵՏ | ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ |
| ԱՄԲԻՈՆ | ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՍԱ-ՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ |
| ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՄՈԴՈՒԼ | ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ |
| ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ ԵՎ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿ | 1410B4/17, 1 մոդուլ |
| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ |
| ԿՈՒՐՍ/ԿԻՍԱՄՅԱԿ | 3-րդ կուրս, 2-րդ կիսամյակ |
| ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ | • Ուսանողներին գիտելիքներ հաղորդել հայրենական պատմագրությունում պատմական գիտելիքների և պատմական գիտության զարգացման փուլերի և ուղղությունների, պատմափիլիսոփայական, գաղափարա-քաղաքական հոսանքների, պատմագիրների և հեղինակավոր պատմաբանների գիտական-ստեղծագործական ժառանգության մասին:<br>• Ամրապնդել հարգանքն ու հպարտությունը սեփական ազգի պատմական անցյալի, գիտական ժառանգության նկատմամբ:<br>• Նպաստել քաղաքացիական ակտիվ դիրքորոշման ձևավորմանը՝ ազգային նույնականացման և ինքնաճանաչման միջոցով: |
| ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ | ԳԻՏԵԼԻՔ<br>• Նկարագրել պատմական գիտության զարգացման ներքին և արտաքին գործոնները;<br>• Բացատրել պատմագիտության զարգացման առանձնահատկությունները;<br>• Բնորոշել հայ պատմագիրների և պատմաբանների հայացքներն ու աշխատությունները;<br>• Սահմանել հայ պատմաբանների պատմահայեցողության սկզբունքները;<br>• Վեր հանել պատմագիտական հայեցակարգերի առաջացման պատմական պայմանները;<br>• Սահմանել հայրենական պատմագրությունում տեղ գտած հայոց պատմության առանցքային հիմնախնդիրները;<br>• Ճանաչել հայ նշանավոր պատմաբանների գիտական ժառանգությունը;<br>• Բացատրել հայոց պատմության պատմագրության զարգացման ուղղությունները ժամանակակից փուլում:<br><br>ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ<br>• Ինքնուրույն վերլուծել աղբյուրները, պատմական գրականությունը;<br>• ձևակերպել գիտական աշխատանքների պատմագրական մասը;<br>• առանձնացնել պատմական հայեցակարգերն ու մեկնաբանել պատմափիլիսոփայական |

| | |
|---|---|
| | ուղղությունները;<br>• համադրել պատմաբանների պատմահայեցողությունները;<br>• հիմնավորել պատմագիտական հայեցակարգերը՝ տվյալ ժամանակաշրջանի պատմափիլիսոփայության և հասարակական-սոցիալական պատմության համատեքստում;<br>• գնահատել պատմաբանների գիտական ժառանգությունը;<br>• ստացած գիտելիքները կիրառել դպրոցում:<br><br>ՀՄՏՈՒԹՅՈՒՆ<br>• Հիմնավորել կամ քննադատել պատմագիտական վերլուծությունները,<br>• Պաշտպանել կամ հերքել պատմաբանների հայացքները,<br>• Պատմափիլիսոփայական ուղղությունների համակարգում պաշտպանել սեփական դիտարկումները,<br>• Նախանշել հայրենական պատմագրությունում պատմական գիտելիքների և պատմական գիտության զարգացման ժամանակակից ուղղությունների զարգացման միտումները,<br>• Ճանաչել ու արժեվորել ազգային պատմագիտական ժառանգությունը: |
| ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ | • ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 4/120<br>• ԼՍԱՐԱՅԻՆ ԺԱՄ - 48<br>• ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ - 24<br>• ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ - 24<br>• ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ -4 |
| ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ | Հիմնարար գիտելիքներ հայոց պատմությունից, աղբյուրագիտությունից, փիլիսոփայությունից՝ բակալավրի ծրագրերին համապատասխան: |
| ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ | Խոսքային մեթոդներ՝ դասախոսություն, հարցախույզ, բանավեճ-քննարկում:<br>Գործնական մեթոդներ՝ աշխատանք սկզբնաղբյուրների և պատմական գրականության հետ, ինքնուրույն և խմբային աշխատանք: |
| ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ | 1.Պատմագրություն առարկան և ուսումնասիրման օբյեկտը:<br>2.Հայոց պատմության պատմագրության սկզբնավորման պատմական պայմաններն ու զարգացման ընդհանուր միտումները V դարում:<br>2.1.Հայոց պատմության պատմագրության սկզբնավորման ներքին և արտաքին գործոնները: Ագաթանգեղոս: Փավստոս Բուզանդ և Եղիշե:<br>2.2.Ղազար Փարպեցի: Մովսես Խորենացին և Խորենացիագիտությունը:<br>3. Պատմագրության զարգացման միտումները 7-13-րդ դարերում:<br>3.1.Ամբողջական պատմության պատմագրության զարգացումը 7-13-րդ դարերում:<br>3.2.Նախարարական տոհմերի պատմության պատմագրության զարգացումը 7-13-րդ դարերում:<br>3.3.Ժամանակագրության սկզբնավորումը պատմագրությունում 12-րդ դարում:<br>4.13-18-րդ դդ.-ի պատմագրության զարգացման |

| | |
|---|---|
| | առանձնահատկություններն ու միտումները: 4.1. Թովմա Մեծոփեցի և Առաքել Դավրիժեցի: 4.2.Երեմիա Քյոմուրճյանի պատմագիտական ժառանգությունն ու պատմահայեցողությունը: 4.3. Բուրժուական պատմահայեցողության ձևավորումը XVIII դարում: Մադրասյան խմբակը: 4.4.Միքայել Չամչյանի պատմագիտական ժառանգությունը: 5.Պատմագիտական ուսումնասիրությունների հայեցակարգային մոտեցումներն ու զարգացման ուղղությունները XIX դարում: 5.1. Ազգային հայեցակարգերն ու պատմափիլիսոփայական ընկալումները XIX դարի արևելահայ իրականությունում: 5.2. XIX դարի պատմագրության զարգացման առանձնահատկություններն ու ընդհանուր միտումները արևմտահայության մեջ: 6. Խորհրդահայ պատմագրության զարգացման ընդհանուր միտումները 1922-90-ական թթ.-ին: 6.1.Խորհրդահայ պատմագրության սկզբնավորումը: 6.2..Խորհրդահայ պատմագրության զարգացումը 1950-91թթ.-ին: 7.Հայկական հարցի պատմագրության սկզբնավորումը և զարգացումը 19-20-րդ դարերում: 7.1. Հայկական հարցը մինչխորհրդային պատմագրությունում: 7.2.Հայկական հարցի ու Ցեղասպանության խորհրդային պատմագրությունը: 8..Հայկական հարցի ու Ցեղասպանության հետխորհրդային պատմագրությունը: 9.Հայոց պատմության պատմագրության ժամանակակից գիտական հայեցակարգը, ուսումնասիրության ոլորտներն ու հրատարակումները: |

| ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | |
|---|---|
| ՀԻՄՆԱԿԱՆ | 1.Մ.Հարությունյան, Հայոց պատմության պատմագրության Դասախոսությունների փաթեթ: 2.Բաբայան Լ.Հ,, Դրվագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության, 5-8-րդ դարեր, Երևան, 1977: 3. Մելիք-Բախշյան Ստ., Հայոց պատմության աղբյուրագիտություն, Երևան, 1989: 4. Տեր-Մկրտչյան Գ., Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1979: 5.Սարուխանյան Ն, Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997: 6.Հայ ժողովրդի պատմություն, ԳԱԱ հրատարակություն, հ.6-րդ, Երևան, 1981: 7. Հայկական հարց// Հանրագիտարան, Կ.Խուդավերդյանի խմբագրությամբ, Երևան, 1996: 8.Հայոց ցեղասպանությունը, ուսումնասիրություններ, Պ.Հ.Հովհաննիսյանի խմբագրությամբ, Երևան, 2001: 9. Հայ մշակույթի նշանավոր գործիչները, 5-18-րդ դդ., Է.Բ.Աղայանի. Էմ.Ա.Պիվազյանի, Հ,Գ.Ժամկոչյանի խմբ., Երևան, 1976: 10. Հարությունյան Շ., Պատմագրության զարգացումը, Երևան, 1974: 11. Հովհաննիեսյան Պ.Հ., Աբրահամյան Ա.Գ., Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա,Երևան, 1981: 12. Մալխասյանց Ստ., Մատենագիտական դիտողություններ, Երևան, 1961: 13. Քառյան Ս., Հայաստանի առաջին հանրապետության պատմության պատմագրություն, Երևան, 2003: |

**ԼՐԱՑՈՒՑԻՉ**


1. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, ծանոթ., թարգմ, Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983:
2. Եղիշեի Վարդանանց պատմությունը, թարգմ., ծանոթություններով պրոֆ. դ-ր Ե.Տեր-Մինասյանի, Երևան, 1958:
3. Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, թարգմ., ներած., ծանոթագր.ակադ. Ստ.Մալխասյանի, Երևան, 1968:
4. Մ.Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ., ներած., ծանոթ. Ստ.Մալխասյանի, Երևան, 1990:
5. Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, աշխատասիրությամբ՝ Վ.Հ.Վարդանյանի, Ա.Ս.Սահակյանի խմբ., «Խորհրդային գրող», 1989:
6. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, թարգմ, ծանոթ., ներած. Հ.Բարթիկյանի, Երևան, 1973:
7. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, թարգմ, ծանոթ., առաջ. Վ. Առաքելյանի, Երևան, 1982:
8. Առաքել Դավրիժեցի, Պատմություն, խմբ. Վ.Գ.Համբարձումյան, Երևան, 1988:
9. Մ.Չամչյանց, Հայոց պատմություն, Ս.Ա.Համբարձումյանի խմբ., Երևան, 1985:
10. Ն.Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, թարգմ.Ա Թ..Խոնդրկյան և Է.Հ.Խոնդրկյան, Երևան, 1987:
11. Ն.Ադոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, Վ.Ա.Դիլոյանի թարգմ., խմբագր., Երևան, 1989:
12. Ն.Ադոնց, Երկեր, h.Ա, Բ, Գ, Երևան,2006, 2008:
13. Հ.Մանանդյան, Երկեր, Երևան, 1977:
14. Հ,Մանանդյան, Ֆեոդոլիզմը հին Հայաստանում, Երևան, 1934:
15. Լեո, Երկերի ժողովածու, Երևան, 1973:
16.Սարգսյան Ա.Բ., Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» և Մովսես Խորենացին, Երևան, 1991:
17. Սարգսյան Գ.Խ., Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966:


**ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ**

Նախատեսված են 2 ընթացիկ գրավոր ստուգումներ ՝ գրավոր ստուգողական աշխատանքներ, յուրաքանչյուրը՝ 100 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 35, 35, 30 միավորային արժեքով: Եզրափակիչ ստուգումը գրավոր է՝ 100 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 30, 30, 40 միավորային արժեքով:
Միավորների քայլը 5 է:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ**

1. Բաղադրիչ 1 – 10% (հաճախումներ)
2. Բաղադրիչ 2- 20% (ընթացիկ ստուգում 1-ին)
3. Բաղադրիչ 3- 20% (ընթացիկ ստուգում 2-րդ)
4. Բ աղադրիչ 4- 40% (ամփոփիչ ստուգում)
5. Բ աղադրիչ 5- 10% (ընթացիկ ակտիվություն)

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ**

| Գնահատման թվային միավորը | Տառային գնահատական | Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը |
|---|---|---|
| 96-100 | A+ | 5+ |
| 91-95 | A | 5 |
| 86-90 | A- | 5- |
| 81-85 | B+ | 4+ |
| 76-80 | B | 4 |
| 71-75 | B- | 4- |

| | | |
|---|---|---|
| 66-70 | C+ | 3+ |
| 61-65 | C | 3 |
| 40-60 | C- | 3- |
| Մինչև 39 | D | 2 |

## ՈՒՍԱՆՈՂԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ ԿՐԵԴԻՏ/ԿՐԵԴԻՏ ԺԱՄ- 4/120

| Հ/Հ | Թ ե մ ա | Լսարանային ժամեր | | | | | Ուսանողի ինքնուրույն աշխատաժամանակը | Ուսանողի ընդհանուր աշխատաժամանակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Դասախոսություն | Գործնական | Լաբորատոր | Սեմինար | Ուս. պրակտիկա | | |
| 1. | Ներածություն: Պատմագրություն առարկան և նրա ուսումնասիրության օբյեկտը: Հայոց պատմության պատմագրության սկզբնավորման ներքին և արտաքին գործոնները: Ագաթանգեղոս: Փավստոս Բուզանդ և Եղիշե: | 2 | | | | | 2 | 4 |
| 2. | Հայոց պատմագրության սկզբնավորումն ու զարգացումը V դարում: | | | | 2 | | 3 | 5 |
| 3. | Ղազար Փարպեցի: Մովսես Խորենացին և Խորենացիագիտությունը: | 2 | | | | | 1,5 | 3,5 |
| 4. | Մովսես Խորենացին և Խորենացիագիտությունը: | | | | 2 | | 2,5 | 4,5 |
| 5. | Պատմագրության զարգացման միտումները 7-13-րդ դարերում: Ամբողջական պատմության պատմագրության զարգացումը 7-13-րդ դարերում: | 2 | | | | | 2 | 4 |
| 6. | VII-XIII դարերի պատմագրության զարգացման ընդհանուր բնութագիրը: Հայոց ամբողջական պատմության պատմագրությունը: | | | | 2 | | 3 | 5 |
| 7. | Նախարարական տոհմերի պատմության պատմագրության զարգացումը 7-13-րդ դարերում: Ժամանակագրության սկզբնավորումը պատմագրությունում 12-րդ դարում: | 2 | | | | | 2 | 4 |
| 8. | Նախարարական տոհմերի և իշխանությունների պատմության պատմագրությունը VII-XIII դարերում: | | | | 2 | | 3 | 5 |
| 9. | VII-XIII դարերի պատմագրության զարգացման ընդհանուր բնութագիրը: Տարեգրության ժանրի սկզբնավորումը: | | | | 2 | | 2,5 | 4,5 |
| 10. | Թովմա Մեծոփեցի և Առաքել Դավրիժեցի: Երեմիա Քյոմուրճյանի պատմագիտական ժառանգությունն ու | 2 | | | | | 2 | 4 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պատմահայեցողությունը: | | | | | | | |
| 11. | Բուրժուական պատմահայեցողության ձևավորումը XVIII դարում: Մադրասյան խմբակը: Միքայել Չամչյանի պատմագիտական ժառանգությունը: | 2 | | | | | 1,5 | 3,5 |
| 12. | XIV-XVIII դարերի պատմագրության զարգացման ուղղություններն ու առանձնահատկությունները: | | | | 2 | | 2,5 | 4,5 |
| 13. | Ազգային հայեցակարգերն ու պատմափիլիսոփայական ընկալումները XIX դարի հայ իրականությունում: | 2 | | | | | 2 | 4 |
| 14. | Ազգային հայեցակարգերն ու պատմափիլիսոփայական ընկալումները XIX դարի արևմտահայ իրականությունում: | 2 | | | | | 2,5 | 4,5 |
| 15. | Պատմագիտական ուսումնասիրություն-ների հայեցակարգային մոտեցումներն ու զարգացման ուղղությունները XIX դարում (պոլսահայ դպրոց): | | | | 2 | | 3,5 | 5,5 |
| 16. | XIX դարի պատմագրության զարգացման առանձնահատկություններն ու ընդհանուր միտումները արևելահայության մեջ: | 2 | | | | | 2,5 | 4,5 |
| 17. | Պատմագիտական ուսումնասիրությունների հայեցակարգային մոտեցումներն ու զարգացման ուղղությունները XIX դարում: Ն.Ադոնց: | | | | 2 | | 3,5 | 5,5 |
| 18. | Հ.Մանանդյանը որպես Հայաստանի պատմության հին և միջին շրջանների ուսումնասիրող: | | | | 2 | | 3 | 5 |
| 19. | Հայկական հարցը մինչխորհրդային պատմագրությունում: | 2 | | | | | 1,5 | 3,5 |
| 20. | Խորհրդահայ պատմագրության սկզբնավորումն ու զարգացումը 1922-91թթ.-ին: Հայկական հարցի ու Ցեղասպանության խորհրդային պատմագրությունը: | 2 | | | | | 2 | 4 |
| 21. | Խորհրդահայ պատմագրության զարգացման ընդհանուր միտումները 1922-90-ական թթ.-ին: | | | | 2 | | 2,5 | 4,5 |
| 22. | Հայկական հարցի ու Ցեղասպանության հիմնախնդրի ուսումնասիրումը խորհրդային ժամանակաշրջանում: | | | | 2 | | 3 | 5 |
| 23. | Հայոց պատմության պատմագրության ժամանակակից գիտական հայեցակարգը, | 2 | | | | | 2 | 4 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ուսումնասիրության ոլորտներն ու հրատարակումները: | | | | | | | |
| 24. | Հայկական հարցի ու Ցեղասպանության հիմնախնդրի ուսումնասիրումը հետխորհրդային ժամանակաշրջանում: | | | | 2 | | 2,5 | 4,5 |
| Ընթացիկ ստուգում 1 | | | | | | | | 4 |
| Ընթացիկ ստուգում 2 | | | | | | | | 4 |
| Ամփոփիչ ստուգում | | | | | | | | 6 |
| Ընդամենը | | | | | | | | 120 |